

ուած միայն Ս. Յակոբայ տաճարին, 3—4000 լիրայի մօտ արժէքով :⁽¹⁾

Եւզոուպ աղայի գործունէութեանց տեսակին վրայ չունինք մանրամասն տեղեկութիւն :

1730—45ի միջոցները՝ փայլած է Կ. Պոլիսի հրապարակին վրայ Բաղէշէ զաղթական մեծատուն Եուսուֆ չէլէպին՝ Կ. Պոլիսի արդեան Եուսուֆեանց նախահայրը, որ և հիմնագործը կը համարուի Կ. Պոլիսի նշանաւոր Հայ սահաքնիներուն. ինք թուի թէ իր ժամանակի հնչուն ժամացոյցները բերել կուտար գլխաւորապէս Անգղիայէն ու կը վայելէր՝ պատկառելի հարստութեան մը հետ՝ պատկառելի անուն և դիրք : Իրմէն սերած կաւանդուին 19րդ դարու սկիզբը սահաթճի Բարդուղիմէոս, և Տիգրան Եուսուֆեան Զարեհ ու Երուանդ Եուսուֆեանք, կարծենք նաև Յովսէփ Եուսուֆեան :

1760—63ի միջոցը՝ նշանակուած են մեծ Վէզիրին վաճառապետ (պազիրկետն պաշի) Պօղոս Ղազար ու Ասլան ամիրաները : Ղազար ամիրան շուտ ինկաւ,⁽²⁾ ու ասոնց երեքին միանգամայն յաջորդեցին՝ Ճանսուզեան Սարգիս ոմն և Սաքայեան Մարտիրոս : Սոյն միջոցները Ագուլիս քաղաքին հայ բնակիչները, որ 10000 տունէ աւելի էին, ցրուեցան աշխարհի սփիւռքը՝ մանաւանդ Կ. Պոլիսի շուրջը. ասոնք ըստ մեծ մասին հնդկական վաճառականներ էին ու իրենցմէ սերեցան շատ հայ մեծատուններ, որոնց շատը բարերար եղան եկեղեցւոյ տը-

(1) Սեղբեստրոսի և Եւզոուպ աղայի բնակութեան ամառային ապարանքն են եղեր՝ Վերին Վոսփորի եւրոպական եզերքին վրայ այժմեան ռուսական և ֆրանսական դեսպանատունները :

(2) Սահակ աղայ Ղազարոսեան՝ աներն Ապրոյեանց (հանգուցեալ ի Գատըզիւղ) և իր եղբարքը սերած են այս Ղազար ամիրայէն :